Մրցույթի հայտարարություն

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Թթուջուր գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի
տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Թթուջուր գյուղի միջնակարգ դպրոց» և «Վահան գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների կառավարման միացյալ խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2)«Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով

2) ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ).

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը (բնօրինակի հետ).

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Թթուջուր գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ում 2021 թ. դեկտեմբերի 16-ից մինչև 2021 թ. հունվարի 7 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 15:00-ն, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի հունվարի 21-ին՝ ժամը 14:00-ին, «ՀՀ Գեղարքունիքի մարզի Թթուջուր գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ–ում, հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ գ. Թթուջուր, 1/27:

Տեղեկությունների համար դիմել՝ 093121392, ttujur-geghar@schools.am: